

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՆԵՐԴՐՈՒՄ ՉՈՊԱՆՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄՊԱՐԵԶՈՒՄ¹

Չոպանյանը Երեւանում հանդիպումներ է ունենում ժամանակի հայ մշակույթի ու գիտության գրեթե բոլոր մեծերի ու նշանավորների հետ... Արեղյանին, որի հետ բարեկամացել էր դեռ 1908 թ.¹ էջմիածնում գտնված ժամանակ, հաճախ է այցելում, հետաքրքրվում նորահնար ուղղագրությամբ, որը, ինչպես ինքն է բնութագրում, «աննոռնի եւ անիմաստ խաթարում մըն էր մեսրոպեան պատուական ուղղագրութեան»: Երբ Չոպանյանը հետաքրքրվում է փոփոխության պատճառներով, անվանի գիտնականը տալիս է մի բացատրություն, որը լրացուցիչ լույս է սփռում նրա գործունեության այդ բազմաշառչար կողմի վրա: «Առաջին տեսակցութեանս ընթացքին,— պատմում է Չոպանյանը,— իրեն հարցուցի թէ ինչո՞ւ այդ արտառոց ուղղագրութիւնը մէջտեղ նետած էր: «Ռուսերը, պատասխանեց, իրենց այբուբէնին մէջ բարեփոխութիւններ մտցուցին: Կառավարութիւնը զիս կանչեց եւ հարցուց ինձի թէ հայ ուղղագրութեան մէջ ալ պէտք կա՞յ բարեփոխութիւններ մտցնելու»: «Ինչո՞ւ չըսիք, ընդմիջեցի զինքն իսկոյն, թէ հայ ուղղագրութիւնը պէտք չունի բարեփոխման»: «Մի՞թէ կարելի է այդպիսի բան ըսել», բացազանչեց Արեղեան: Հասկցայ որ Նոր Դարի նախկին աշխատակից Արեղեանը վախցած էր կառավարութեան աչիին պահպանողական երեսպէ եւ «Պէտք կայ» վճռած էր...»²: Ուրեմն, բազմավաստակ Արեղյանը զգուշացել, եթէ չասենք ուղղակի երկյուղել էր հեղափոխական իշխանությունից եւ նախընտրել էր հնարել հայոց լեզվի նոր ուղղագրություն, քան վտանգել իր անձը³:

Արշակ Չոպանյանի խմբագրած ազգային, գրական-գեղարվեստական «Անահիտ» հանդեսը բացառիկ տեղ է գրավում ոչ միայն հայ մամուլի պատմության, այլև հայ պատմամշակութային կյանքի տարեգրության

¹* Ստացվել է՝ 8.08.2025, գրախոսվել է՝ 9.09.2025: Էլ. հասցե՝ arshaluysgalstyan@ysu.am:

² Ա. ՉՕՊԱՆՅԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յունուար-յունիս, թիւ 1, էջ 50:

³ ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ, Արշակ Չոպանյանը եւ վերածնված «Անահիտ» հանդեսը, Երևան, 2025, էջ 28–29:

մեջ՝ պայմանավորված իր արդիականությունը, բովանդակության խորությունը, հանրագիտարանային ընդգրկումներով, ընդարձակ լսարանով եւ, անշուշտ, խմբագրի անհատականությունը ու ինքնատիպությունը, ճանաչումով ու հեղինակությունը:

Հանդեսի հրատարակությունն սկսվել է 1898 թ. Փարիզում ու որոշ ընդհատումներով շարունակվել մինչեւ 1949 թ.: Այն ունեցել է հրատարակության երկու շրջան. առաջինը՝ 1898—1911 թթ., եւ երկրորդը՝ 1929—1941 ու 1946—1949 թթ.:

Շուրջ երեսուն տարի անընդմեջ տպագրվելով՝ պարբերականն անփոխարինելի դեր է խաղացել հայ մշակույթի, գրականության եւ գեղարվեստի զարգացման բնագավառում, մեծապես նպաստել հայ-եւրոպական՝ մասնավորապես հայ-ֆրանսիական գրական-մշակութային կապերի ամրապնդմանը, օտար հեղինակների հայագիտական աշխատությունները թարգմանելու եւ հայ ընթերցողին ծանոթացնելու գործում: Մեծ է «Անահիտի» ավանդը նաեւ Հայ դատի պաշտպանության, արեւմտահայ եւ արեւելահայ, իսկ հետագայում Սփյուռքի եւ Խորհրդային Հայաստանի հասարակական-մշակութային առնչությունների առաջընթացի ու զորացման ասպարեզում: Այս ամենի շնորհիվ «Անահիտը» հայ պարբերական մամուլի հարուստ պատմության մեջ գրավել է իր կայուն եւ հաստատուն տեղը:

Սակայն եթե «Անահիտի» առաջին շրջանի գործունեությունը դարձել էր առանձին հետազոտության նյութ՝ շնորհիվ Յուրի Ավետիսյանի՝ «Անահիտ» հանդեսը՝ արժեքավոր մենագրության (Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1999, 228 էջ), հանդեսի երկրորդ շրջանը հատուկ ուսումնասիրության առարկա դեռ չէր եղել: Զնայած թե՛ անցյալում եւ թե՛ մեր օրերում եւ Սփյուռքում, եւ մեզանում տարբեր հեղինակներ այս կամ այն չափով անդրադարձել են «Անահիտի» նաեւ երկրորդ շրջանին, նրա խմբագրի ընդարձակ ու բեղմնավոր գործունեությանը պատմական այդ ժամանակաշրջանում⁴: Սակայն դրանք, հիմնականում լինելով ակնարկային, գրված բանախոսությունների ոճով կամ ընդհանուր գնահատանքի

⁴ Առկա ուսումնասիրությունների շարքում, անշուշտ, առանձնանում է Կառլեն Դալլաքյանի «Արշակ Չոպանյան» բարձրարժեք մենագրությունը (Երեւան, 1987), որտեղ հեղինակը մի առանձին գլխով անդրադարձել է «Անահիտի» երկրորդ շրջանին: Արժանին մատուցելով անվանի շոպանյանագետին՝ պետք է սակայն նկատել, որ նա մասամբ է բացահայտել հանդեսի հասարակական ու գրական-գեղարվեստական բովանդակ նշանակությունը:

մակարդակով, չեն ներկայացնում հանդեսի երկրորդ շրջանի լայնածավալ ու բազմաբնույթ գործունեության ամբողջական պատկերը:

Ահա այդ բացը եկավ լրացնելու ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության եւ գրականության տեսության ամբիոնի ղոցենտ, բան. գիտ. թեկնածու Վաչագան Ավագյանի «Արշակ Չոպանյանը եւ վերածնված «Անահիտ» հանդեսը» մենագրությունը (Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 2025, 170 էջ), որտեղ հեղինակը փորձ է արել առավել հիմնավոր ներկայացնել «Անահիտի» գործունեության երկրորդ շրջանի էական կողմերը, տալ նրա ազգային-հասարակական ու գեղագիտական գնահատականը, ինչպես նաեւ տեսանելի դարձնել հանդեսի խմբագրապետի՝ այդ ժամանակաշրջանի այլազան գործունեությանը վերաբերող տարբեր դրվագներ ու էջեր:

Վ. Ավագյանն իր մենագրության մեջ անդրադարձել է «Անահիտի» երկրորդ շրջանի բազմազան գործունեության գրեթե բոլոր կողմերին՝ բացի հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության եւ ռամկավար-ազատականների գործունեության եւ փոխհարաբերության, Հայկական հարցի, համաշխարհային քաղաքական իրադրության վերաբերյալ քննարկումներից, որոնք, ինչպես հեղինակն է փաստում, չեն բխել իր հետապնդած նպատակների բովանդակությունից:

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է կարճ ներածությունից (3 էջ), հինգ գլխից (168 էջ), հայերեն, ռուսերեն եւ անգլերեն ամփոփումներից (մեկական էջ), անվանացանկից (7 էջ). կցված է օգտագործված գրականության հարուստ ցանկը (5 էջ):

Հանգամանորեն ուսումնասիրելով նոր շրջանի «Անահիտի» բոլոր համարները՝ Վ. Ավագյանը հսկայածավալ այդ ամբողջ նյութը համակարգել է, դասակարգել՝ ըստ թեմաների, կազմել գրքի գլուխները: Առաջին գլխում, հղում տալով Յ. Ավետիսյանի գրքին, հեղինակը նախ շատ կարճառոտ գրում է «Անահիտի»՝ առաջին շրջանում արեւմտահայ գրական-գեղարվեստական կյանքում ունեցած դերի մասին, ներկայացնում է նրա նշանակությունը մանավանդ արեւմտահայության քաղաքական ինքնագիտակցության հասունացմանը, ազգային արժանապատվության զգացմունքի զարգացմանը բերած գործում: Այնուհետեւ հանգամանորեն ներկայացվում են հանդեսի

երկրորդ շրջանի ձեռնարկման եւ հիմնադրման մանրամասները, ծրագրային այն դրույթները, որոնք սահմանեց Չոպանյանը «Անահիտի» համար: Առաջին համաշխարհային պատերազմի պատճառած բազմաթիվ աղետներից հետո ազգային ինքնավարությունը դարերով կորցրած մեր ժողովրդի համար Չոպանյանը մասնավորապես մշակույթն է համարում այն առանցքային լծակը, որը կապահովեր նրա ինքնուրույնության դիմագիծը եւ կենսունակություն կհաղորդեր նրա իղձերին: Իսկ դրա համար որպես գլխավոր ազդակ նա տեսնում է նորաստեղծ Խորհրդային Հայաստանը՝ իր պետական լեզվով, համալսարանով, մատենադարանով, թատրոնով ու դպրոցներով: Վ. Ավագյանը նկատում է, որ, ճիշտ է, թեեւ Չոպանյանի համար Արեւելյան Հայաստանում հաստատված քաղաքական կարգերն ինչ-որ տեղ ընդունելի չէին, կային գաղափարական ինչ-ինչ խոչընդոտներ, եւ անվանի մտավորականն ուներ որոշ վերապահություններ, որոնք երբեմն-երբեմն տարբեր առիթներով արտահայտել է, այնուամենայնիվ, նա այդ ամենը երկրորդական էր համարում այն կարեւոր փաստի համեմատությամբ, որը Խորհրդային Հայաստանի գոյությունն է: Եւ Ա. Չոպանյանը կոչ է անում ողջ հայությանը, մասնավորապես գաղթավայրերում ապաստանած արեւմտահայությանը հոգով կապվել նրա հետ, պահպանելով արեւմտահայ լեզուն ու գրականությունը, չխզելով կապը անցյալի հետ՝ աջակցություն բերել ազգային մշակույթի զարգացման ընդհանուր գործին, մասնակցել հայրենիքի վերակառուցման աշխատանքներին եւ ոգեւորվել նրա յուրաքանչյուր հաջողությամբ: Ուրեմն, ինչպես ճիշտ նկատում է Վ. Ավագյանը, հայրենիքի եւ գաղութահայության միջեւ հարաբերությունների ամրապնդման, մտավոր ուժերի՝ հանուն ընդհանրական ու ամբողջական մշակույթի միավորման ու զուգակցման ձգտումն էր նաեւ, որ Չոպանյանին մղեց ձեռնարկել «Անահիտի» երկրորդ շրջանը:

«Անահիտի» եւ նրա խմբագրի հայեցակարգի կարեւոր մի կողմն էլ եւրոպական եւ ամերիկյան քաղաքակրթության բարձր արժեքների յուրացման պահանջն էր, որը դարձյալ հետեւողականորեն նա պաշտպանեց իր գործունեությամբ:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է Ա. Չոպանյանի՝ Խորհրդային Հայաստանի իրականության գնահատմանը: Չոպանյանի համար, ինչպես

իրավացիորեն փաստում է Վ. Ավագյանը, ազգը ավելի լայն հասկացու-
թյուն էր, քան այս կամ այն կուսակցությունը կամ նրա գաղափարա-
բանությունը. «Ազգին շահը կուսակցութեան շահէն վեր դնել միշտ»⁵,—
այս էր Չոպանյանի նշանաբանը»⁶:

Ներկայացնելով «Անահիտի»՝ Խորհրդային Հայաստանին նվիրված հատուկ բաժինները՝ հեղինակը ցույց է տալիս, թե ինչ ջերմությամբ էր խմբագիրը իրեն հատուկ գեղեցիկ ոճով գրում, պատմում երկրի մշակութային կյանքի, գիտական նորաստեղծ գլխավոր հաստատությունների, կրթական, գրական-գեղարվեստական մարզերում կատարված գործերի ու նաեւ հոգսերի մասին, հանդեսում տպագրում խորհրդահայ գրողների, բանասերների, արվեստագետների, մշակույթի քննադատների աշխատանքներն ու ուսումնասիրությունները, իր բարձր գնահատականը տալիս նրանցից շատերին: Չոպանյանը հանդեսի էջերում վկայակոչում է նաեւ անվանի գրողների ու գործիչների (Մ. Գորկի, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, Կարեն Միքայելյան) նոթերը, տեղեկությունները, կարծիքները՝ Հայաստանից ստացած տպավորությունների մասին՝ շարունակաբար կոչ անելով սփյուռքահայությունը օգնել հայրենիքին, աջակցել նրա վերաշինությանը, տարագրված հայերին ներգաղթել եւ համախմբվել հայրենիքում՝ օժանդակելով նրա զորանալուն: Այս գլխում պատմվում է նաեւ Չոպանյանի՝ 1932 թ. տարեվերջին կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ առաջին եւ վերջին անգամ Խորհրդային Հայաստան կատարած լացի, ժամանակի հայ մշակույթի ու գիտության գրեթե բոլոր մեծերի ու նշանավորների հետ հանդիպումների (Աշխարհաբեգ Քալանթար, Կարո Մելիք-Օհանջանյան, Լեւոն Միրաքյան, Մարտիրոս Սարյան, Հակոբ Կոչոյան, Արա Սարգսյան, Փանոս Թերլեմեզյան, Ալեքսանդր Թամանյան, Թորոս Թորամանյան, Շիրվանզադե, Դերենիկ Դեմիրճյան, Հակոբ Մանանդյան, Հրաչյա Աճառյան, Մանուկ Աբեղյան, Վահան Թոթովենց, Աղասի Խանջյան, Եղիշե Չարենց, Յուլիա Խանզադյան, Հովհաննես Աբելյան, Ալազան եւ այլք), ստացած տպավորությունների եւ փոխա-

⁵ Ա. ՉՕՊԱՆՅԱՆ, Մեր երէկն ու այսօրը, «Անահիտ», Փարիզ, 1933, յուրիս—սեպտեմբեր, թիւ 1—2, էջ 8:

⁶ Վ. ԱՎԱԳՅԱՆ, Արշակ Չոպանյանը եւ վերածնված «Անահիտ» հանդեսը, Երեւան, 2023, էջ 16: Այսուհետեւ այս գրքից մեջբերումները կտրվեն բուն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն էջահամարը:

դարձ բարեկամություն մասին: Տպավորիչ է հատկապես Չոպանյանի՝ Ալազանի նկատմամբ մեծահոգի, ներողամիտ վերաբերմունքի մասին պատմությունը, որտեղ ուրվագծվում է մասնավորապես առաջինի վեհանձն կերպարը (էջ 31–33):

Գրքի ամենածավալուն գլուխը՝ վերնագրված «Գրականության հարցերը «Անահիտի» երկրորդ շրջանում», կազմված է չորս ենթագլխից: Առաջինում՝ «Համաշխարհային գրականության քարոզը հանդեսում», Վ. Ավագյանը ներկայացնում է, թե ինչպես Չոպանյանը, ձգտելով ընդարձակել ազգային մշակույթի զարգացման սահմանները, հանդեսի էջերում թարգմանաբար պարբերապես տպագրում է համաշխարհային գրականության կոթողներից՝ ինչպես արեւելյան, այնպես էլ եւրոպական հին ու նոր հեղինակների գործերից՝ գրական-բանասիրական տարբեր հարցերի առնչությամբ բերելով իր դիտարկումներն ու դիտողությունները, նաեւ առարկություններն ու պատճառաբանությունները: Վ. Ավագյանի համոզիչ դիտարկմամբ՝ մասնավորապես դնելով արեւելյան դասական արժեքների յուրացման, ինչպես նաեւ մերը թարգմանաբար նրանց ներկայացնելու պահանջը՝ Չոպանյանը հետապնդում էր լրացուցիչ, թերեւս ոչ պակաս կարեւոր մի նպատակ, քան կարող էր լինել սոսկ արեւելյան մշակույթի, մասնավորապես թուրքական ու պարսից գրականությունների ճանաչումը կամ նրանց հետ համեմատվելու հնարավորությունը. «...այն է՝ ցույց տալ հայ գեղարվեստի ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը արեւելյան միջավայրում, համոզել, որ այն սերում է ազգային ակունքներից եւ ունի տոհմիկ առանձնակի յուրակերպություն» (էջ 43): Ուրեմն, ինչպես համոզվում ենք, Չոպանյանի համար արեւելյան մշակույթի հետ ծանոթացումը չէր հետապնդում բացառապես ճանաչողական, բանասիրական, գիտական հետաքրքրությունների դիտավորություն, այլեւ ուներ ազգային-հայրենասիրական գաղափարաբանություն:

Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է նաեւ «Անահիտի»՝ ռուս եւ եւրոպական գրականությանների նկատմամբ վերաբերմունքին եւ քաղաքականությանը՝ հաստատելով, որ հանդեսը այդպիսով «ոչ միայն ցանկանում էր գոհացում տալ իր ընթերցողի պահանջներին, ազնվացնել նրա ճաշակն ու հայացքները, այլեւ մտահոգված հայ գրականության զարգացման խնդիրներով՝ հետեւողականորեն ձգտում էր հայ գեղարվեստը հարստացնել նոր շեշտադրումներով ու հարցադրումներով, ստեղ-

ծել բարձր մշակույթ, որը, պահպանելով իր ազգային դիմագիծը, չէր լինի միակողմանի եւ կտրված համաշխարհային գրական ընթացքից» (էջ 51):

Երկրորդ՝ «Հայ միջնադարյան գրականությունը եւ նրա ավանդները» ենթագլխում, շարունակելով «Անահիտի» նախորդ շրջանի լավագույն ավանդները՝ հրատարակելով եւ գնահատելով հայ գրական արժեքները, ավելի հաճախ միջնադարյան հայ հեղինակների դեռ անծանոթ ու անտիպ ստեղծագործությունները, նաեւ միջնադարյան մատենագիրների ու տաղերգուների գործերի հայ եւ օտարազգի հեղինակների ուսումնասիրությունները՝ Ա. Չոպանյանը, ինչպես համոզիչ գնահատականներով ցույց է տալիս Վ. Ավագյանը, կարեւորում էր նաեւ նոր սերնդի ծանոթացումը հայ հին գրականությանը. «Շարունակելով հրատարակել միջնադարյան մեր հեղինակների զմայլելի բանաստեղծությունները՝ Չոպանյանը նպատակ ուներ հայ արդի գրական միտքը հաղորդակցության մեջ դնել իր անցյալի հետ, իսկ անցյալի գրական այդ ժառանգությանը գրականագետի տված գիտական մեկնաբանություններն ու բացատրությունները պայմանավորված էին դարձյալ ազգային բանաստեղծական ավանդների ու արմատների բացահայտման ձգտմամբ» (53–54), – գրում է հեղինակը: Իրավացի է Վ. Ավագյանը, երբ նշում է, թե հայոց անցյալի գրական ժառանգության գնահատումներում «Չոպանյանին գիտական, պատմաբանասիրական, ազգագրական խնդիրներից առավել հետաքրքրում էին միջնադարյան գրականության գեղարվեստական-բանաստեղծական արժանիքներն ու ստեղծագործական անուրանալի շնորհները՝ իբրեւ իսկական ու ճշմարիտ գրական արտահայտություններ» (էջ 58):

Երրորդ՝ «Հայ նոր գրականության արժեւորումը» ենթագլխում, Վ. Ավագյանը ցույց է տալիս, թե ինչպես է Չոպանյանը գեղագիտական նույն մոտեցմամբ գնահատում նաեւ հայ նոր գրականության հեղինակներին ու նրանց գրական ժառանգությունը: Տրված գնահատականները ունեն գիտական լուրջ ծանրություն եւ փաստում են, թե ըստ ամենայնի որքան ճիշտ է Չոպանյանը ըմբռնել ու հասկացել Թ. Թերզյանի, Րաֆֆու, Ավ. Իսահակյանի, Նար-Ռոսի եւ մյուսների ստեղծագործության առանձնահատկությունները: Չոպանյանի գրական-մշակութային աշխարհայացքի կարեւոր հատկանիշներից մեկը Վ. Ավագյանը իրավացիորեն տեսնում է այն, որ գրականագետը, նոր սերնդի գրողներին չմեկուսացնելով նախորդներից, հաստատում է

այն հոգեւոր կապը, որ գոյութիւն ունենաւ անցյալի ու պատմական ներկայի միջեւ: Գրքի հեղինակի գրականագիտական խառնվածքի բնութագրման համար այստեղ կարելու է այն, որ միշտ չէ, որ նա համաձայնում է Ա. Չոպանյանի հայտնած ինչ-ինչ տեսակետներին: Օրինակ, նա խիստ վերապահութեամբ է մոտենում Չոպանյանի այն կարծիքին, անգամ մերժում նրա այն համազմունքը, թե Գ. Սունդուկյանը, Շիրվանզադեն եւ Նար-Դոսը իրականութեան մերկացման իրենց քննադատական ուղղութեամբ ու դատապարտմամբ նախապատրաստել են սոցիալական հեղափոխութիւն: «...նրանք,— ինչպէս բացատրում է Վ. Ավագյանը,— պատկերելով իրենց ժամանակի սոցիալական միջավայրը, հասել են հասարակական կյանքի թերութիւնների եւ հակասութիւնների գեղարվեստական ամբողջացմանը, եւ այդ թերութիւնները ցանկանալով տեսնել վերացած՝ հասարակութեան վերափոխման եւ բարեփոխման մեջ ավելի հաճախ դրել են անհատի խնդիրը կամ նրա մաքրագործման պահանջը, գաղափարական բողոքը, որը եթե անգամ վերաճել է սոցիալական դժգոհութեան, ապա չի հասել դասակարգային ուղիղ կռիւ կամ ըմբոստութեան նպատակի» (էջ 76—77): Այս հանգամանքը ցույց է տալիս Վ. Ավագյանի՝ Ա. Չոպանյանի կարծիքների կամ տեսակետների մեջ խորանալու, տրված գնահատականները ճշգրտելու ձգտումը:

Վերածնված «Անահիտը» բացառիկ դեր կատարեց նաեւ նոր սերնդի թե՛ խորհրդահայ եւ թե՛ սփյուռքահայ հեղինակների ստեղծագործութիւններն իր էջերում տպագրելով, իսկ նրա խմբագիրն ավելի հաճախ, առջեւում ունենալով մասնավորապէս սկսնակների գեղագիտական դաստիարակութեան հարկավորութիւնը, ինչպէս նաեւ ընթացիկ գրականութեան առանցքային խնդիրների ըմբռնման պահանջը, հանդես եկավ քննադատական վերլուծութիւններով ու գնահատումներով: Գրքի երրորդ գլխի շորորդ ենթագլուխը ահա Վ. Ավագյանը նվիրել է այս հարցերի քննութեանը՝ ցույց տալով, թե ինչպէս մշտապէս ուշիուշով հետեւելով գրական նոր սերնդի գաղափարական ու գեղարվեստական զարգացմանը՝ յուրաքանչյուր նոր հեղինակի (Համաստեղ, Թորոս Ազատյան, Շահան Շահնուր, Զարեհ Որբունի, Վահան Թոթովենց, Հրաչ Զարդարյան, Կոստան Զարյան, Նիկողոս Սարաֆյան, Մուշեղ Իշխան, Վիլյամ Սարոյան, Գեղամ Աթմաճյան, Միսաք Մանուչյան, Եղիշե Զարենց, Գուրգեն Մահարի, Ալագան, Ազատ Վշտունի, Վաղարշակ Նորենց, Մկրտիչ Արմեն, Հովհաննէս

Շիրազ եւ այլք), նորատիպ որեւէ ժողովածուի կամ ստեղծագործության կապակցությամբ Չոպանյանի անգամ հակիրճ ու համառոտ վերլուծությունները իրենց բովանդակությամբ դուրս են գալիս պարզ գնահատանքի շրջանակից եւ ստանում լուրջ գրախոսության արժեք:

Գրքում մի առանձին գլուխ էլ հատկացված է «Անահիտում» տեղ գտած թե՛ հայ, թե՛ օտարազգի տարբեր հեղինակների գիտական եւ մշակութային տարատեսակ բովանդակությամբ ուսումնասիրությունների վերլուծությանն ու գնահատմանը, հանդեսի՝ իր ընթերցողներին նաեւ համաշխարհային արվեստի գանձերին եւ գեղարվեստական շարժմանը ծանոթացնելու հարցերին: Տպագրելով հայ արվեստին եւ արվեստագետներին վերաբերող նյութեր, իրազեկելով հայրենիքում եւ Սփյուռքում հրատարակված կամ տպագրության պատրաստվող գրքերի, աշխատությունների մասին, տեղեկություններ հաղորդելով մասնավորապես Խորհրդային Հայաստանում իրականացված մշակութային միջոցառումների վերաբերյալ՝ Չոպանյանը, ինչպես ճշմարտորեն նկատում է Վ. Ավագյանը, ձգտում էր ոչ միայն հաստատել մեր մշակույթի վաղնջականությունը, ինքնատիպությունն ու ինքնուրունությունը, համաշխարհային առնչություններն ու տեղը միջազգային ասպարեզում, գեղարվեստական բարձր ճաշակի արտահայտությունը նաեւ ներկա ժամանակներում, այլեւ աշխարհով մեկ ցրված հայրենակիցների մեջ դաստիարակել գիտակցված ազգասիրություն, հարազատ ժողովրդի նկատմամբ հարգանք եւ հավատարմություն:

Աշխատության վերջին գլխում՝ վերնագրված «Վերահաս աղետը եւ «Անահիտի» փակումը», Վ. Ավագյանը նախ նկարագրում է հանդեսի խմբագրի հոգեբանական ծանր ու մոլոր վիճակը՝ պայմանավորված 1937 թ. աղետաբեր տարվանից ստալինյան դաժան, մարդատյաց ու ազգահալած քաղաքականության հետեւանքով հայրենիքից եկող տազնապահար տեղեկություններով: Չոպանյանին ծանրագին ցավ են պատճառում անվանի բազմաթիվ հայ մտավորականներին հանիրավի մեղադրանքներ ներկայացնելու լուրերը, առավել՝ քաջածանոթ ու տաղանդավոր շատ գրողների՝ իրենց ընկերներին ուղղված զրպարտանքները՝ իբրեւ «Յուդայի հոգիով» նաիրեցիների ամբաստանությունների «արդիւնք» (էջ 170): Պարսավանքներից, պարզվում է, գերծ չէր մնացել նաեւ Չոպանյանը: Սակայն, ինչպես ցույց է տալիս Վ. Ավագյանը, մոռացած իրեն հասցված անձնական վիրավորանքները՝ մեծահոգ մտավորականը՝ որպես ճշմարիտ արվեստագետ, իրեն զրպարտողների մեջ տեսնում էր

միայն ազգային տաղանդավոր գրողների (Զապել Եսայան, Եղիա Չուբար) եւ հավասարաչափ տազնապում նաեւ նրանց ճակատագրի համար:

Առաջին աշխարհամարտի տարիներին զգուշանալով նաեւ հիտլերյան վարչակարգի հնարավոր հետապնդումներից՝ Ա. Չոպանյանը շուրջ վեց տարի ընդհատեց «Անահիտը» հրատարակումը: Իսկ պատերազմից հետո, որքան էլ թեեւ նորոգվեցին մշակութային առնչությունները Խորհրդային Հայաստանի հետ, վերհաստատվեցին արտասահմանյան հայ տարագիր զանգվածների ու բնօրրանի հայություն միջեւ հարաբերություններն ու գործակցությունը, սակայն դրանք հեռու էին օրինաչափ ձեւից: Այդ տարիներին արդեն, ինչպես բացատրում է Վ. Ավագյանը, Չոպանյանը քիչ բան կարողացավ անել: 1949 թ. ընդմիջտ դադարեց լույս տեսնել «Անահիտ» հանդեսը: Վ. Ավագյանն իր աշխատությունները շրջանառության է դրել «Անահիտում» տպագրաված մեծաքանակ նյութեր, տողատակերում տվել բազմաթիվ հղումներ, որոնք միջնորդաբար կարող են կարելոր սկզբնաղբյուրի դեր ունենալ ամենատարբեր գիտական-մշակութային հարցերի առնչությամբ: Այս հանգամանքը պերճախոս վկայությունն է նաեւ նրա, թե աշխատասիրողը որքան մտահոգ է Ա. Չոպանյանի գործունեության ներկա եւ ապագա զբաղվողների իմացության եւ գիտելիքների խնդրով:

Այն հանգամանքը, որ «Անահիտի» ընդգրկած նյութի շրջանակը շատ լայն է, բազմաբովանդակ, իսկ նրա խմբագրի գիտական հետաքրքրությունները վերաբերում են մեր գրականության պատմության գրեթե ողջ ընթացքին, հասկանալի է, թե Վ. Ավագյանի գործը ինչ եռանդուն եւ տքնաջան տեւական աշխատանք է պահանջել: Նա իր մտահանգումներին ու հիմնավորումներին հասել է նյութի խոր ու բազմակողմանի ուսումնասիրություններով, գիտական դիպուկ, բնորոշ բացահայտումների միջոցով: Լոկ այն, որ Վ. Ավագյանի շնորհիվ վերածնված «Անահիտից» որքան նոր նյութ է մտել շրջանառության մեջ, արդեն, կարծում ենք, բավական է գնահատելու նրա գիտական նախաձեռնությունը: Ամփոփելով վստահաբար կարող ենք ասել, որ Վ. Ավագյանի արժեքավոր այս ուսումնասիրությունը գալիս է լրացնելու հայագիտության մեծ երախտավորի՝ Արշակ Չոպանյանի բեղուն վաստակը եւ իր կարելոր տեղն ունենալու հայ գրականագիտության, մամուլի պատմության մեջ:

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳԱԼՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Արշակ Չոպանյան, «Անահիտ» հանդես, չոպանյանագիտություն, հայ մամուլի պատմություն, սփյուռքահայ գրականություն, հայ-ֆրանսիական մշակութային կապեր, ուղղագրական բարեփոխում, Խորհրդային Հայաստան, գրական քննադատություն, ազգային ինքնագիտակցություն:

РЕЗЮМЕ

В статье анализируется монография Вачагана Авагяна «Аршак Чопанян и возрожденный журнал “Анаит”» (Ереван, 2025), в которой предлагается целостный и концептуально обоснованный анализ второго этапа истории литературно-культурного журнала (1929–1941; 1946–1949), редактируемого Аршаком Чопаняном. Исследование восполняет существенный пробел в чопаняноведении, поскольку данный период развития журнала ранее не становился предметом самостоятельного, системного и комплексного научного изучения.

SUMMARY

The article examines Vachagan Avagyan’s monograph “Arshag Chobanian and “Anahit” Revived Journal” (Yerevan, 2025), offering a coherent and conceptually grounded analysis of the second phase in the history of the literary and cultural journal (1929–1941; 1946–1949) edited by Arshag Chobanian. The study addresses a major lacuna in Chobanian scholarship, as this period of the journal’s development has not previously been subjected to an independent, systematic, and comprehensive scholarly investigation.

